Արձանագրություն N 3

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԿՑՈՐԴ/2024/Հ-11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան

<< 18>> 01. 2024թ.

Մասնակցում էին՝

- ՀՀ ՆԳՆ Ո ՊԾ պարեկային ծառայության կազմակերպման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Դ.Հակոբյան (հանձնաժողովի նախագահ),
- (ՀՀ ՆԳՆ Ո ՊԾ տնտեսական բաժանմունքի պետ Ա. Ավագյան,)
- ՀՀ ՆԳՆ Ո ՊԾ մոնիթորինգի և վերլուծության բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սայադյան,
- ՀՀ ՆԳՆ ՏԿ գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ասատրյան (հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **ավտոմեքենաների կցորդների մասերի** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԿՑՈՐԴ/2024/Հ-11 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԿՑՈՐԴ/2024/Հ-11 ծածկագրով ընթացակարգը կասեցվել էր հայտերի ուսումնասիրման և գնահատման համար:

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ԱՁ Աղաբաբյան Լյովայի հայտում առկա են բոլոր փաստաթղթերը: Սակայն տեխնիկական բնութագիրը գնահատվում է անբավարար, քանի որ մասնակցի կողմից հստակ տվյալներ չեն նշված ապրանքի տեխնիկական բնութագրի հետ կապված: Մասնավորապես տեխնիկական բնութագրում նշված են միջակայքեր, կամ «առնվազն» բառեր, սակայն պետք է կոնկրետ ապրանքի չափորոշիչներ (պարամետրեր) ներկայացնել, նկարագրել կոնկրետ քաշ, կոնկրետ համախառն քաշ, ինչպես նաև ապրանքային նշանի փոխարեն գրված է ՌԴ, որը ապրանքային նշան չի համարվում, նաև անհրաժեշտ է ճշգրտել մասնակցի կողմից նշված է Փորկոn Mitsubishi L 200 մակնիշն արդյո՞ք հանդիսանում է ներկայացված ապրանքի մակնիշը, թե ոչ և նշել կոնկրետ ավտոմեքենաների կցորդների մասերին վերաբերող տվյալներ, ոչ թե ավտոմեքենային վերաբերող:

3. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.

Հանձնաժողովը որոշեց ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԿՑՈՐԴ/2024/Հ-11 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել ԱՁ Աղաբաբյան Լյովային 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան

Ա. Սայադյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան